

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 62/7

27 դեկտեմբերի 2013 թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով <Վիդեո Ռեկլամա> ՍՊԸ կողմից 18.12.2013 թ-ի գրությամբ բերված բողոքը (այսուհետ նաև բողոք) և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

<Վիդեո Ռեկլամա> ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացրել է բողոք (մուտք ՀՀ ԿԱ ՊԵԿ 18.12.2013 թ-ի թիվ 17245-13), որով խնդրել է անվավեր ճանաչել 10.12.2013 թ-ի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու վերաբերյալ թիվ 025753 որոշումը: Այնուհետև, <Վիդեո Ռեկլամա> ՍՊԸ տնօրենը Հանձնաժողովի նախագահին հասցեագրված 27.12.2013 թ-ի գրությամբ միջնորդություն է ներկայացրել, որով խնդրել է ընկերության բողոքը թողնել առանց քննության:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ <Վիդեո Ռեկլամա> ՍՊԸ բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

<Վիդեո Ռեկլամա> ՍՊԸ բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ